Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

898

1876

2010

205
Зє-66

ԵՐԵՎ

ՆԿԱՏՄՈՒՆՔ

ՓՐԿՉԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՎԵՐԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՍԱՂԵԱՆ ԳԻՒՂԱՑԻ

ՄԿՐՏԻՉ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱԹԱԲԷԿԵԱՆՑԸ

ԱԼԵՔ. ՀԱՅԵՐԱՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. ՀԱՅԿ-
ՄԿ. Ա ԱԹԱԲԵԿԵԱՆ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։
1876.

N. 12.

Дозволено Цензурою. Тифлисъ 14 Февраля 1875 года.

205
Սպ
35-66

Սաղեանոի Դպրոցի „Գիրքագան“ Ընկերութեան

ԱՆՓՈՓՈԽ ԱՆԴԱՄ

եւ

ՆՈՅՆ ԳԻՐՔԻ ԾԽԱԿԱՆ

Բարեկրօն Սահակ քահանայ Յովհաննէսեանցի՝

Իւր Նախկին Հայրախնամ ուսուցչի

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երախտագէտ սրտով

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԹԱՐԳՄԱՆՈՂԸ։

1008
37903
2001

30962-4.)

14048-58

Զե՛րդ ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ

Հոգեւոր Հայր տէր Սահակ!

Գրքոյկիս ճակատին Ձեր վսեմ անուան դրոշմուած փայլելու պատճառը ո՛չ այլ ինչէ, եթէ ո՛չ իմ երախտագիտութեան նշանը Ձեր ինձ համար գործ դրած բոլոր բարերարութեանց վերաբերմամբ։

Բաղմերախտ Տէր, Ձեր անբաւ երախտեաց ենթակայ լինելուցը չ՚եմ կարող ես բոլորովին աղատուիլ այս դուշնաքեայ աշխատութիւնովս, որը ամեն դասի մարդկանց հասկանալի լինելու մասին ամենապարզ ոճով գրուած՝ նուիրվում է Ձեր Արժանապատուութեանը հրապարակաւ. ուստի խնդրում եմ, ընդունեցէ՛ք քաղցրութեամբ այս փոքրիկ լումայն և թոյլ տուէ՛ք, որ ներողամիտ լինի Փրկչական առատ սիրով Ձեր լեցուն ու բարերար սիրտը դէպ՚ի Ծեզ առ միշտ երախտապարտ

Մկրտիչ Ամաբէգեանցը։

1876 ամի 20 Նոյեմբերի.
՚Ի Բագու։

ԵՐԵՔ ՆԿԱՏՄՈՒՆՔ
ՓՐԿՉԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՎԵՐԱՅ

I.

ԱՌԱՋԻՆ ՆԿԱՏՈՒՄՆ

Թէ Աստուած ի՛նչպէս է սիրում իւր սիրելիներին։

Մարդկանց մեծ մասը այժմեան կեանքում իրանց գործողութիւնների նպատակը արել են այն, որ ստանան այնպիսի՛ մարդկանց հաճութիւնը և սէրը՝ որոնք վայելում են ընդհանրի յարգանքը։ Համարեա՝ թէ ամենայն մարդ բաղդաւոր է անուանում այն անձանց՝ որոնք մեծաւորութիւն ունին այս կամ այն անուանի մարդոց հետ։ Շատերը նախանձում են նոցա վերայ, և մի ուրիշը աշխատում է ամենայն կերպ, որ վայր դնրէ նորանց բախտաւորութեան այն բարձր աստիճանից և բռնէ նոցա տեղը. բայց վերջապէս նա զգում է, նա հասկանում է, որ իւր բոլոր ցանկութիւնքը և ջանքը անխոհեմութիւն էին, և թէ նա վազում էր միմիայն շուաքի ետևից, որովհետև նա չէ՛ հասնում իւր նպատակին, կամ եթէ հասնում է կարճ ժամանակաւ, բայց այնուամենայնիւ անբաւական և անհանգիստ է մնում։ Շատ անգամ զանազան անյաջողութիւններով, հիւանդութիւնով և մահով, կամ իւր խնամատարների դէպի ինքը

ցոյց տուած տհաճութեան պատճառաւ, յանկարծ կործանվումէ նորա բախտաւորութիւնը, որ յառաջ քան թէ կարողացել էր վայելել նորան լիովին:

Միմիայն Աստուածէ մեծ, հարուստ, ամենակարող թագաւոր և տիեզերաց Ամենակալ: Յաւիտենական անփոփոխելին և նորա խնամակալութիւնը, սէրը ու գթութիւնը մեզ համար ամենից թանկագինը պիտի լինին աշխարհիս երեսին, վասն զի, նա՝ միայն նա կարողէ կատարել մեր բոլոր ցանկութիւնքը, և շնորհել առատ վարձատրութիւն թէ ներկայ և թէ՛ ապագայ կեանքում. և այս վարձատրութիւնը ու շնորհը կարողէ ստանալ ամեն մի մարդ, որ փրկութիւն է խնդրում: Ո՛վ մարդ, թագաւորաց թագաւորի և տէրանց տէրի սէրը ու գթութիւնը խնդրի՛ր,— և դու անշուշտ ձեռ կ'բերես այն՝ ինչոր բոլոր աշխարհը ո՛չ տալ կարողէ քեզ և ո՛չ խլել քեզնից,—ինչ որ չէն կարող պարգևել քեզ երկրիս իշխանքը և մեծամեծքը թէև չափազանց համակրեն և 'ի բոլոր սրտէ սիրեն քեզ:

Ամենաբարձրելոյ սէրը վայելել և պատկանիլ նոցա թուին, որոնց համար Քրիստոս-Փրկիչը ասում է. Հայրը ինքը «էրս-ի է նէզ (Յովհան. 16 27).— ահա՛ ամենամեծ արտօնութիւն, բարձրագոյն պատիւ, լաւագոյն երանութիւն, որոնց միայն մարդը կարողէր հասանել:

Երևելի ու հարուստ մարդիկն էլ մահկանացու են ուրիշների նման, նոցա մահուան հետ միասին՝ վերջանում են և նոցա սէրը ու ողորմութիւնը: Նոքա փոխվումեն, որովհետև՝ մարդիկ են, մի և նոյն ժամանակ՝ փոխվումեն

և նոցա սէրն ու ողորմածութիւնը և շատ անգամ փոխարկվումեն նաև առ'ի անդթութիւն, բարկութիւն և վրէժխնդրութիւն: Աստուած անմահ, ուրեմն նորա սէրը ու ողորմածութիւնը չէն փոխվում: Նորա ողորմութիւնը չէ՛ կարող տեղից շարժել ո՛չ մի իշխանութիւն թէ այս աշխարհում և թէ յաւիտենականութեան մէջ:

Մահուան բոպէում մեզ ի՞նչ օգուտ կարողեն տալ թէև ամբողջ աշխարհի սէրը և համակրութիւնը: Իսկ եթէ Աստուած մեզ սիրումէ, թո՛ղ յայտնուի մահը իւր ամենազարհուրելի և ահռելի կերպարանքով. նա ո՛չ միայն չի վրդովել մեր երջանկութիւնը, այլ ընդհակառակն՝ կ'օգնէ մեզ հասանել կատարեալ երջանկութեան՝ վերափոխելով մեզ այնտեղ, ուր մենք կլինինք բաւականութեան և առատութեան մէջ.— շարունակ և առ յաւիտեան ժառանգել ու զուարճանալ նորանով՝ որով զուարճանումենք այստեղ հաւատոյ և յուսոյ միջոցաւ միայն, այո՛, և այդ փոքրիկ չափով, կամ թէ մենք այստեղ, ինչպէս ասումէ Առաքեալը, նախազգում ենք միայն մասնաւոր կերպով: Այնտեղ Աստուծոյ սիրելիները փորձով կ'իմանան, թէ ի՞նչ կ'նշանակէ յաւիտենական «էրով-«էրս-ած լինելը:

Այնտեղ ցած կ'ընկնի նոցա աչքերից վարագոյրը, և նոքա բաց երեսով կ'տեսնեն Աստուծոյ սէրը իւր բոլոր փառաւորութեան մէջ: Այստեղ ո՛չ աչք է տեսնում, ո՛չ ականջէ լսում և ո՛չ մարդոյ սիրտ է զգում թէ՝ Աստուած ի՛նչէ պատրաստել նոցա համար, որոնք սիրումեն Իրան և որոնց սիրումէ Ինքը: Բայց այնտեղ այս ամենը կ'յայտնուին:

Աստուած՝ որ հեծ է ուղղութիւնով ի-ը առաջ ուիրոյ հանդերձ, որով հեղ ուիրեց, երբ որ հաստատ էին հեր հերէրի հեղ՝ կենդանացրեց հեղ Քրիստոսով։ Նորա հետ յարութիւն տուեց հեղ և նստուցրեց երկնաւորների հեղ Յիսուս Քրիստոսով (Եփես. 2. 4-6)։ Նա ներեց հաւատացելոց բոլոր մեղքերը, առաջուց սահմանեց, որ Իրան որդեգիր լինին Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբ և զուարճացրեց նորանց իւր սիրելիի ձեռքովը՝ որ Նորանով փրկութիւն ունին հետ արիւնի հեղջոյով, հեղաց թողութիւն (Եփես. 1. 6, 7)։

Աստուած օրհնեց Քրիստոսով իւր սիրելիներին, այսինքն հաւատացեալներին ամեն հոգեւոր օրհնութիւնով երկնաւորների հեղ. ընտրեց նորանց աշխարհի սկզբից առաջ՝ որ սուրբ ու անարատ լինին նորա առաջև (Եփես. 1.3.4), և նորանց՝ որոնց առաջուց ճանաչումէր, առաջուց և հրաւիրեց, որ կերպարանակից լինին իւր Որդւոյ պատկերին։ Ինչպիսի՛ ողորմութիւն. կերպարանակից Յիսուս Քրիստոսին։ Աստուծոյ Որդւոյն (Հռոմ. 8. 29)։

Աստուած կնքեց իւր սիրելիներին շնորհքովը սուրբ Հոգւոյ, որը յաւիտենական կենաց գրաւն է, և Որի իսկ ձեռքովը տարածեց իւր սէրը։ իւր Աստուածային սէրը նոցա սրտերի մէջ, որպէս զի նոքա մասնակից լինին իւր Աստուածային բնութեանը։ Եւ Աստուծոյ սէրը, սփռած նոցա սրտերի մէջ Հոգւոյն սրբոյ միջնորդութեամբ, վէճ չունի է պալիս նոցա հոգւոյն, թէ նոքա Աստուծոյ որդիք են. ապա ուրեմն Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ (Հռոմ. 5. 5։ 8. 16, 17)։

Աստուած գրեց իւր սիրելիների անունները իւր գրքի

մէջ, յաւիտենական կենաց գրքի մէջ, և այսուհետև օտար ոչ պանդուխտ չեն նոքա, այլ սրբերի փոխակիցներ և Աստուծոյ ընտանիք (Եփես. 2. 19)։ Նոքա գիտեն, թէ ո՛րտեղ է իրանց օթեւանը։ Երբոր կ'անցնի բոլոր աշխարհը, երբ որ կ'անհետանան երկրիս երեսից հարստների ու իշխանների տները, քաղաքները և երկիրները, երբ որ կ'շարժուի հիմքից և կ'քայքայուի բոլոր տիեզերքը, երբ որ մահը և կորուստը կզրկեն բոլոր մահկանացուներին երկրաւոր բնակարաններից, երբոր աշխարհիս կպած մարդիքը չեն իմանալ թէ՝ ո՛րտեղ թաք կենան, ո՛ր բլրի կամ սարի տակ ծածկուին, այնժամանակ Աստուծոյ սիրելիները կ'ուրախանան և կ'աղաղակեն. Ահա՜ ասել դեր փոխուը ջրոցած և դերկրնը կ'լենք պարծանքներ ու պարծանքներ (Եսայ. 26. 1։ Մեր փոխուի հիմները նորա ուրբ լեռներու վերայ են (Սաղ. 86. 1)։ Մեր փոխուի գիտենք որ՝ երբ փանդուխ դեր շինուածի երկրաւոր տաճարը, շինուածք ունենք Աստուածանից, անձեռագործ և յաւիտենական տաճար երկնքի դեղ (2. Կոր. 5. 1)։ Ուստի վարահունի ունենք և է՛լ աւելի կուզենք, որ դուրս գանք այս մարմնից և մնանք Աստուծոյ մօտ (2. Կոր. 5. 8)։

Աստուած ի-ը ուիրաշին խրատու է (բայց միայն այս կեանքում, որովհետև՝ նա ո՞ր որդի է, որին հայրը չէ պատժում։ Սակայն Աստուծոյ սիրելիները գիտեն, որ այդ հայրական պատիժը հաստատունութիւնով խաղաղութեան պտուղ (Եբր. 12. 6, 7, 11)։ Շատ նեղութիւններով պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւնը (Գործ. 14. 21), շատ վշտերով, զրկանքներով և տրրդմութիւններով —, որոնց վերայ աշխարհը նայումէ ինչ-

պէս մի անաչառ դատաւորի բարկութեան ու անգութ վրէժխնդրութեան վրայ՝ ուստի զարհուրում և յուսահատութեան մէջ է ընկնում, իսկ հաւատացեալները գիտեն և զգում են իրանց սրտերում, թէ իրանց, որ Աստուծոյ ոչխարն են, ամեն բաները բարիի գործակից կ'լինին. ապա ուրեմն ո՛չ մի բան չէ կարող վնասել, այլ բոլորը կ'օգնեն նոցա հասանել նախասահմանեալ երջանկութեանը:

Հայր Աստուածը՝ իւր միածին Որդոյն ուղարկելով աշխարհ՝ ամեն նրան ընդունողներին և նորա անուան հաւատացողներին տալիս է իշխանութիւն Աստուծոյ որդիներ լինելու: Նորա սէրը տարածվում է մինչև այն աստիճան, որ նա իւր Որդւոյ վկայելովը՝ ինքը Որդւոյ հետ միասին պիտի գայ իւր սիրելիների մօտ և օթևան բաց անէ (Յովհ. 14. 23): Նա մօտ է իւր սիրելիներին: Նա խոստանում է նոցա մէջ բնակուիլ, նոցա մէջ քայլել և նոցա Աստուածը լինիլ, և նոքա պիտի նորա ժողովուրդը լինին (2. Կոր. 6. 16):

Հայր Աստուածը խոստանում է իւր սիրելիներին երկնային փառք, որի համար առաջուց սահմանեց նորանց: Ժամանակ կ'գայ, որ նա աշխարհից վեր կ'առնէ նորանց իւր Որդւոյ միջնորդութեամբ, և իւր հրեշտակաց ձեռքով կ'մտցնէ երկնային թագաւորութեան մէջ: Քրիստոս իւր փառքովը գալու ժամանակ պիտի ասէ նորանց.—Եկէ՛ք, իմ Հօրս օրհնածներ, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստած արքայութիւնը (Մատ. 25. 34)

Ամենառատ և անսահման չէ՞ Աստուծոյ ողորմութիւնը և սէրը դէպ'ի իւր սիրելիները. որի՞ սէրը ու ողորմութիւնը, և որի՞ շնորհը կարող են համեմատուիլ Աստուծոյ սիրոյ հետ:— Պարտաւո՞ր չէ արդեօք ամեն մի Քրիստոնեայ ամենից առաւել աշխատելու, որ Աստուծոյ սիրելիների թուի մէջը մտնէ:

II

ԵՐԿՐՈՐԴ ՆԿԱՏՈՒՄՆ

Թէ Աստուծոյ սիրելիները ի՞նչպէս են սիրում իրանց Տիրոջը։

Բայց ի՞նչպէս պիտի մնանք Աստուծոյ սիրելիների դասի մէջ։ Ո՞վ կարող է Աստուծոյ զաւակը լինել։—Իւրքանչիւր մարդ,—միայն եթէ նա ունի եռանդուն փափագ։ Դորա համար հարկաւոր չէ ունենալ ո՛չ առաւել իմաստութիւն, ո՛չ մեծ հանճար, ո՛չ հարստութիւն և ո՛չ այն ամենը, որ չ՚ունի ամեն մարդ և չէ՛ կարող ունենալ։ Դորա համար պահանջվում է միմիայն սէր,—իսկ սիրել ամեն մարդիք կարող են։—Նոքա միայն պիտի զըտնեն իրանց սիրոյ իսկական առարկան։ Աստուած կամենում է, որ նոքա սիրեն սիրոյ Արժանիին—իւր Որդւոյն—, որին աշխարհ է ուղարկած։ Աստուծոյ միածին Որդւոյ սիրոյ միջոցաւ, ստանում ենք նորա ամենաբարի Հօր սէրը։ Սիրով ստացվում է սէր։ Առանց Քրիստոսի սիրոյ ո՛չ ոք կարող չ՚է սիրելի լինել Հօր Աստուծոյն։ Բայց օրինակ առնենք նորանց՝ որոնց համար Քրիստոսը ասաց. Հայրը ինքը «էրո՞մ է յեղ։—ինչո՞վ արժանացան նոքա այդ սիրուն։ ինչո՞վ նոքա դերազանց եղան միւս մարդկանցից։

Քրիստոս փրկիչը երբէք չ՚ասաց Հերովդէսին թէ՝ Հայրս սիրում է քեզ. երբէք չ՚ասաց Կայեափային և նորայ ընկերակիցներին, փարիսեցիներին, դպիրներին, իմաստուններին և ուսումնականներին թէ՝ Հայրս «էրո՞մ է յեղ։ Նա այդ ասաց միայն իրան հետևող ձկնորսներին, մաքսաւորներին և նոցա նման ուրիշ մարդկանց։ Եւ թէպէտ մենք գիտենք, որ Աստուած սիրում է իւր բոլոր արարածներին, կերակուր է տալիս և ագռաւի ձագերին, որ աղաղակում են դէպ՚ի նա, հագցնում է դաշտի շուշաններին, հրամայում է արևգակին ծագել չարիների ու բարիների վրայ, և կամենում է, որ ամեն մարդիք ազատուին,—սակայն Հօր սէրը Քրիստոսի աշակերտների վերայ մի առանձին սէր էր բոլորովին դերազանց իւր ընդհանուր սիրուց դէպ՚ի ամենայն արարածները։ Փրկչի խօսքերը թէ՝ Հայրը «էրո՞մ է յեղ,—նշանակում է, թէ Աստուած թողեց նոցա մեղքերը, պատրաստեց նոցա համար երկնային թագաւորութիւնը, արեց նորանց իւր զաւակներն ու ժառանգները, տուեց նոցա իւր հոգին, գրեց նոցա անունները երկնքի մէջ, պատրաստեց նոցա համար բնակարաններ իւր տան մէջ և այլն։ Ապա ինչո՞ւ համար է Հայր Աստուածը Քրիստոսի աշակերտներին մի առանձին կերպով սիրում։ Ի՞նչպէս են նոքա արժանանում նորա սիրոյն։—Քրիստոս-Փրկիչը ինքը բացատրում է մեզ այդ, ասելով՝

Որովհետև դու «էրեցիր ինձ և հաւատացիր, որ ես Ապրուստ եմ էլել։

Ապա ուրեմն՝ սիրելով Քրիստոսին և հաւատալով Աստուծոյ Որդւոյն, որը իջաւ Հօրից՝ կորածներին ազատելու համար, մենք կարողենք արժանանալ Աստուածա-

յին սիրոյն։ Որդւոյ սէրը վառումէ Հօր սրտի մէջ սէր դէպ'ի մարդը։ Հաւատը դէպ'ի մարդոյ Որդին, Որը վայր իջաւ երկնքից և կեանք է տալիս աշխարհին, — մարդուն սիրելի է անում Հօր Աստուծոյն։

Քրիստոսի աշակերտները արժանացան Հօր Աստուծոյ սիրոյն և սիրելով Յիսուս Քրիստոսին՝ — նորա Որդւոյն, հաճելի եղան նորան։ Ո՛վ սիրումէ Յիսուս Քրիստոսին, նա սիրումէ և նորա Հօրը։ Բայց ճշմարի՞տ է արդեօք, որ նոքա 'ի բոլոր սրտէ սիրեցին Քրիստոսին, — կասկած չ'կայ։ Նա կանչեց նորանց իւր մօտ, և նոքա թողեցին ամենը ու գնացին նորա ետևից։ Նա ասաց. Ո՛վ ե՞ր հօրը կամ մօրը, պղնի կամ աղջկանը ինձանից աւելի է սիրում, ինձ արժանի չէ (Մատ. 10. 37. 38). և նոքա թողեցին ամենը։ Նոքա շատ բան էլ չ'ունէին, բայց ինչ որ ունէին՝ բոլորը ամբողջապէս զոհեցին Քրիստոսի համար։ Նոքա ունեցել են հայրեր ու մայրեր, եղբայրներ ու քոյրեր, հարևաններ ու բարեկամներ, տներ ու դաշտեր, նաւեր և ուռկաններ, և այդ ամենը աղքատ մարդոյ համար, նոյնպէս թանգագին է և սիրելի, ինչպէս հարստի համար— իւր դանձերը, և թագաւորի համար-իւր թագաւորութիւնը։ Ուրեմն կասկած չ'կայ, որ նոքա Յիսուս Քրիստոսին ամենից առաւել սիրեցին աշխարհքիս վերայ։ Նոքա բոլոր պատիւներից, դանձերից և աշխարհի հաճութիւններից վեր էին դասում Նորան։ Նոքա կարողացան ասել. մենք թողեցինք ամեն բան—ամբողջ աշխարհը, և եկանք քո ետևից։

Բայց գուցէ նոքա յուսով էին, որ կ'դառնան նորա մօտ, ինչպէս Իսրայելի թագաւորի, Մեսիայի և աշխարհի Փրկչի մօտ՝ առաւել, քան աշխարհում։ Յիրաւի երբեմն

զարթնումէին նոցա սրտերի մէջ երկրային մտքեր, որ և ասացին. Ահա՛ մենք ամենայնիս թողին և եկանք քեզ հետ, ապրեսցուք ի՞նչ պիտի լինի մեզ (Մատ. 19. 27.) Մի անգամ վիճեցին նոքա իրանց մէջ, թէ ո՛վ է առաջինը. երկուքը կամենումէին նստել Նորա մօտ— մէկը աջ և միւսը ձախ կողմում նորա թագաւորութեան մէջ։ Բայց Քրիստոս — Փրկիչը արմատախիլ արեց խսկոյն նոցա այդպիսի մտքերը և ասաց՝ թէ ինչ պիտի սպասեն նոքա իրանից. „Եթէ չէթողնէք ամենը, ետքո՞նից և ընկնիք ինչպէս երեխաներ, չուրանաք ձեր անձը, և չ'սովորէք տանել ձեր խաչը, չէք կարող իմ աշակերտ լինիլ։ Եթէ դուք սիրումէք մի բան ինձնից առաւել, հայր ու մայր, կամ հենց ձեր կեանքը, ինձ արժանի չէք, և չէք սիրում ինձ։ Դուք պիտի կտրէք ձեր ձեռքը ու ոտքը, հանէք ձեր աչքը և հեռու գցէք ձեզանից՝ եթէ արգելումեն ձեզ՝ ինձ սիրելու, և գաք իմ ետևից։ Դուք պատրաստ պիտի լինիք իմ անուան համար ամենից ատելու և հալածվելու։ Ժամանակ էլ պիտի գայ, որ ամեն՝ ո՛վ ձեզ սպանէ, այնպէս պիտի համարէ, թէ Աստուծոյն պաշտօն է մատուցանում“։

Այդ ամենը՝ և էլի շատ բաներ՝ որ միայն կարողէին վախեցնել ու վրդովել աշխարհասէրներին, ասաց Փրկիչը իւր աշակերտաց, այնպէս որ՝ նոքա չէին կարող այնուհետև սպասել նորանից ո՛չ մի երկրաւոր հաճութիւն ու հեշտութիւն։ Եւ չ'դայելով այդ ամենին՝ նոքա գնացին նորա ետևից, մնացին նորա մօտ և չ'պաղեցին նորա սիրուց, թէպէտև տեսան, որ նա ինքն էլ ոչ գլուխ դնելու տեղ չունէր և ուրիշների տուած ողորմութիւնովն էր ապրում։

Նոքա սիրեցին Նորան ամենից առաւել և ո՛չ մի բան Նորանց չկարողացաւ բաժանել Նորանից։ Թէպէտ փախան Նոքա երկիւղից և երկու օրով թողեցին Նորան այն ժամանակ, երբ Նորան բռնեցին, կապեցին և խաչեցին, բայց երրորդ օրը դարձեալ եկան Նորան խնդրելու, և սրտում էին, և չհանդարտուեցին մինչև որ տեսան Նորան։ Նա՛, միայն նա էր Նոցա ուրախութիւնը, միայն Նորա մօտ էին իրանց անձը երջանիկ համարում։

Եւ Փրկչի վերայ ունեցած այդ սէրը, այդ անձնուրացութիւնը Նոքա յայտնեցին այն ժամանակ, երբ դեռ ևս թոյլ էին ու տկար, երբ սուրբ Հոգին դեռ ևս լիքած չէր Նոցա վերայ առատութիւնով։ Բայց ի՞նչպէս եղան Նոքա այն ժամանակից յետոյ՝ երբ վերևից զօրութիւն ստացան, երբ Աստուծոյ Հոգուով լցուեցան։ Ի՞նչպէս եղաւ Նոցա սէրը Փրկչի վերայ։— Այն ժամանակ ո՛չ մի բան չէր կարող Նորանց բաժանել Փրկչի սիրուց, ո՛չ նեղութիւն, ո՛չ անչնորութիւն, ո՛չ հալածանք, ո՛չ սով, ո՛չ դերութիւն, ո՛չ վէրք և ո՛չ սուր (Հռոմ. 8. 35)։ Նոցա բոլոր կեանքը նուիրուած էր միայն Նորան՝ և Նորա ծառայութեանը, Նորա անուան՝ և թագաւորութեանը. Նոքա բոլորովին ուրացան իրանց անձը, այնպէս որ՝ կարողացան ասել։ Բայց կենդանի եմ՝ ո՛չ ես, այլ Քրիստոսն է կենդանի ի մէջ (Գաղ. 2. 20)։ Մեռելոց մէջը ե՞ր անչնչի համար վէր սպրոտ, և մէջը ե՞ր համար վէր մեռոտ, որովհետև՝ ես սպրեցուցի, տէրոջ համար են սպրոտ, ես մեռնեմ՝ տէրոջ համար են մեռոտ. որովհետև՝ ես սպրեցուցի, ես մեռնեմ, մէջը տէրունն են (Հռոմ. 14. 7. 8)։ Նոքա արդարև խնդրեցին ո՛չ իրանը, այլ այն՝

ինչը պահանջում էր Յիսուս Քրիստոսը։ Նոքա ուրախ էին, երբ կարողացան զոհել իրանց կեանքը Նորա և Նորա արքայութեան համար, երբ արժանացան այն բոլոր նախատինքներին ու նեղութեանց, որոնք տալիս էր Նոցա աշխարհը՝ արհամարհելով Յիսուս Քրիստոսին և Նորա հետևողներին։

Նոքա ո՛չինչ չունէին, և ո՛չինչ էլ չէին խնդրում աշխարհիս վերայ։ Նոքա ասացին. Կերակուր և հագուստ ունենք, նոքանով բաւականանանք (1- Տիմ. 6. 8)։ Նոքա արհամարհեցին աշխարհիս պատիւները, երկրիս գանձերը, մարմնոյ ցանկութիւնները և փախան այդ ամենից։

Բայց ո՞րտեղից արդեօք ծագեց Նոցա մէջ այդ զօրեղ և անզուգական սէրը դէպ՝ի Քրիստոս։— Հաւատքի հետևանքն էր այդ։ Սէրը պիտի հիմն ունենայ, բայց ճշմարիտ սէրը — հաստատ հիմն։ Նոքա սիրեցին Քրիստոսին այն պատճառաւ, որ հաւատացին թէ՝ Նա իջաւ Աստուածանից և եկաւ այս աշխարհ կորածներին գտնելու և ազատելու համար։ Նորանում ճանաչեցին Նոքա խոստացված Մեսիային, Իսրայէլի Աստուծոյ ուղարկածին՝ Որը այցելութիւն եկաւ, և ի՞նչ ժողովրդին փրկութիւն տուեց (Ղուկ. 1. 68)։ Եւ Առաքեալքը այնպէս հաստատ հաւատացած էին Փրկչին, որ երբ Նորա աշակերտներից շատերը յետ դնացին, և Նորա ետևից էլ ման չէին գալիս, և երբ հարցրեց Փրկիչը „Մի՞թէ դուք էլ ուզում՞ք դնալ,“ Նոքա վճռաբար և ուրախութեամբ պատասխանելով՝ յայտնեցին. „Տէր, ո՞ւմ մօտ պիտի դնանք. Դու յաւիտենական կենաց խօսքեր ունիս“ (Յովհ. 6. 68, 69)։

Նոքա տեսին թէ՝ Նա ինչպէս սիրում, մխիթարում և օրհնում էր մարդկանց, խորհուրդ էր տալիս և օգնում տառապեալներին ու նեղեալներին, և զգացին՝ որ այդ ամենը հնարաւոր է միմիայն Աստուածային սիրոյն: Նոքա տեսին նորա գործերը ինչպէս Ամենակարողի գործեր, և լսելով նորա խօսքերը՝ պիտի խոստովանէին, որ ՆԵՐ այս մարդոյ պէս երբէք խօսած չէ (Յովհ. 7. 46): Նոքա տեսին նորան սուրբ լերան վերայ արեգական պէս փայլելու ժամանակ, տեսին նորան թէ՝ ինչպէս գնթսեմանիում մեռնելու չափ տրտմած էր, սաստիկ նեղութիւնում լինելով՝ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք էր անում արիւն քրտինքի մէջ, որը երբէք պատահած չէր մահկանացուներին: Մէկ խօսքով, նոքա միշտ՝ ինչպէս նորա չարչարանաց ժամանակ, նոյնպէս և նորա փառաւորութեան ժամերում՝ տեսնում էին նորա մէջ Աստուածային մի անճառելի սէր: Նոքա տեսին նորան խաչի վերայ մեռած մեր մեղքերի համար և յարութիւն առած մեզ արդարացնելու մասին. տեսին,—ինչպէս Նա համբարձուեց երկինք, որ այնտեղ մեզ համար օթևաններ պատրաստէ, և հաւատով, ուրա՛խ հաւատով սպասեցին սուրբ Հոգոյն, որ Քրիստոս խոստացաւ ուղարկելու, և ստանալով այն՝ սիրեցին մինչև մահ նորան, Որին հաւատացել էին, և Որը սիրեց նորանց իրանցից առաջ:

Ուրեմն սիրեցին նոքա Աստուծոյ Որդուն, մեզ երջանկութիւն պատճառողին, և սիրուեցին Հօրից, որովհետև՝ հաւատացին Աստուածանից ուղարկուած Քրիստոսին, հաւատացին Հօրից ելած Աստուծոյ Որդոյն, Որը սկզբից Աստուծոյ մօտ էր, և ինքը Աստուած էր. հաւատացին, որ Նա բոլոր մարդկանց համար կեանք և երջանկութիւն, լոյս և փրկութիւն բերաւ աշխարհ և պարգևեց մեզ սուրբ Հոգւոյ շնորհքը, մեղաց թողութիւն, և յաւիտենական արդարութիւն

Այն հաւատը՝ թէ Նա սիրեց մեզ և մատնեց իւր անձը մեզ համար, և թէ եղա՝ մեզ Աստուածանից իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն և փրկութիւն (1. Կոր. 1. 30),—ստիպեց նոցա ասել: Սիրենք Աստուածոյն, որովհետև՝ առաջ նա սիրեց մեզ: Աստուածոյ սէրը այս բառով յայտնի եղա՝ մեզ մէջ, որ ուղարկեց աշխարհ իւր միածին Որդոյն, որպէս զի նորանով մեզ կենդանի լինենք: Այս բառի մէջն է սէրը՝ որ ո՛չ թէ մեզ սիրեցինք Աստուածոյն, այլ նա սիրեց մեզ և ուղարկեց իւր Որդոյն մեր մեղքերը քաւելու համար: Եւ մեզ պէսպէս ուս վէճոյ՝ որ Հայրը ուղարկեց իւր Որդոյն աշխարհի փրկիչ լինելու (1. Յովհ. 4. 19, 9, 10, 14):

Նոքա կարողացան կատարեալ հաւատով ասել. Նա կարեկից է մեր մեղացը: Աստուած Քրիստոսով հաշտեցրեց աշխարհը իւրով հետ և վերցրեց մարդկանց մեղքերը (2. Կոր. 5. 19). մեզ նորանով ունինք փրկութիւն նորա արեան մեջոյով՝ մեղաց թողութիւն (Եփես. 1. 7). Յիսուս Քրիստոսի արիւնը սրբում է մեզ ամեն մեղքերից (1. Յովհ. 1. 7). Աստուած ապարդեց մեզ խաւարի իշխանութիւնից և փոխեց թագաւորութիւնը սիրելի Որդոյ արքայութիւնը (Կող. 1. 13): Այդ հաւատը զարթնացրեց նոցա մէջ սէր՝ որով նոքա յաղթեցին և՛ իրանց և՛ աշխարհին:

Նոքա հաւատացին, որ Նա ամենայն Աստուծոյ պատկերն է,—որ նորա մէջ բնակվում է Աստուածութեան բոլոր լրումը մարմնապէս (Կող. 1. 15; 2. 9),—որ միայն

Աստուած կարողէ այնպէս սիրել, մխթարել և օգնել՝ ինչպէս նա, և այդ հաւատը կատարելացրեց նոցա բոր-բոքուած սէրը դէպ'ի նա: Նոքա տեսին, փորձեցին, զգա-ցին, և համարեա՝ թէ՝ շօշափեցին իրանց ձեռքերով սի-րող, փրկող և ազատող Աստուածութիւնը նորանում և նորա բոլոր գործերի ու չարչարանքների մէջ: Եւ այդ պատճառաւ նոքա դրուեցան. նա՝ որ «կը-ղէկն էր, որի մա-սին լսեցին, որին դեռ տեսչէին, որին նայեցին և դեռ յեր-ուեցը շօշափեցին: Ե՝ կեանքը յայտնուեց. և տեսանին՝ և վկայում են՝ և պատմում են յեղ յաւիտենական կեանց մասին . . . . , որ գոյ և հաղորդուիլն անենաւ դեղ հեր. և դեղ հաղորդուիլնը նորա հեր է և նորա Որդի Յիսուս Քրիստոսի հեր (1. Յովհ. 1. 1—3): Մենք տեսանք նորա փառքը՝ ինչպէս հօրինը դիծնի փառքը (Յովհ. 1. 14):

Նոքա չկարողացան ըստ բաւականին ուրախանալ նո-րանով՝ որ Աստուած այնքան սիրեց իրանց, որ ուղար-կեց իւր Որդուն աշխարհ, որպէս զի նորա ձեռքով վայելեն նոքա առատապէս կեանք, և այդ իսկ պատճա-ռաւ՝ նոքա սիրեցին Որդուն հօրը համար, և հօրը—դե-բադրն Տուողին՝ Որդուն—գերազանց Պարգևի համար:

Նոցա սէրը լոկ խօսքով չէր, այլ յայտնի էր իրանց ամեն մի ընթացքում և բոլոր կեանքի մէջ: Նոքա կա-տարեցին Յիսուս Քրիստոսի պատուէրները, և չնայելով ո'չ մի դժուարութեան՝ կատարեցին այն ամենը, ինչ որ հրամայեց նոցա. ինչ դեռ խնայողութեան էր, առացին նոքա, այն Աստուծոյ համար է, և երբ ողջոյն էր, այն յեղ համար է: Որովհետև՝ Քրիստոսի սէրը պարտադրում է դեղ՝

որ դեռնէնք այս։ Ինչ դեղը ամենի համար դեռաւ, որ-տեղ ամենն էլ դեռաւ էին: Ե՝ Քրիստոսը դեռաւ ամենի համար, որ կենդանի եղողները՝ ո'չ ինչ երանց անյնելի համար կեն-դանի լինին, այլ նորա համար, որ երանց փոխանակ դե-ռաւ՝ և յարութիւն առաւ (2. կոր. 5. 13—15): Նոքա Քրիստոսի վերայ իրանց ունեցած սէրը յայտնեցին ամեն բանի մէջ. նեղութիւններին՝ վշտերին, ծարաւներին, ծեծերին, քանդերին, խոսվութիւններին, աշխատութիւններին, հըս-կոտնջերին և պատերի դեղ: Մատրութիւնում, գիպութիւնում, երկայնմտութիւնում և տպղրութիւնում դեղ: Փառաւով և անարգանաւով, գովասանաւով և քամբասանաւով. ինչպէս մոլորեց-նողներ՝ և ճշմարտախօսներ. ինչպէս վճռաւորներ՝ և ճանաչուածներ: Ինչպէս պարծուածներ՝ և դեղ տրուած-ներ. ինչպէս ապրողներ՝ և շարերին հարատարներ (2. կոր. 6. 4—6, 8—10):

Նոցա սէրը յայտնուեց և նորանում, որ նոքա մեծ անձնուիրաբարոյութիւնով քարոզում էին ո'չ թէ իրանց անձները, այլ Յիսուս Քրիստոսին. նորան անուանում էին Տէր, իսկ իրանց ծառաներ (2. կոր. 4. 5): Մենք ամեն բանի դեղ նեղացած ենք, ասում էին նոքա, բայց չենք նեղացած, կարօտութիւնում դեղ կացած՝ բայց պարակուսուիլն չենք: Հալածուած՝ բայց երեսից չընկած, ընկնում՝ բայց չապրակուած: Յիսուս Քրիստոսի մահը ամեն ժամանակ կրում ենք դեղ մարմնիներին դեղ, որ Յիսուսի կեանքն էլ յայտնուի դեղանում: Որովհետև՝ դեռ, որ կենդանի ենք՝ դեղը Յիսուսի համար մատնվում ենք մահուան, որ Յիսուսի կեանքն էլ յայտնի լինի դեղ մահկանացու մարմնիներին դեղ: Ուստի և չենք յանձնուում. բայց ինչպէս դեղ դրուած

14048-58
3Ղ003

մարդը պապականվո՞ւմ է, ապկայն մեր ներքին մարդը օրցէօր նո-
րոգվո՞ւմ է (2. կոր. 4. 8–11. 16)։ Նոքա ազատ լինելով Քրիս-
տոսի սիրոյ համար ամեն բանից, ծառայում էին ամենին,
ամենի հետ ամեն բան էին լինում, որ ապրեցնեն մի
քանիսին։

Քրիստոսի սէրը զօրութիւն էր տալիս նոցա տանե-
լու զանազան անարգանաց մինչև այն աստիճան, որ նո-
քա չէին տրտնջում, երբ նորանց համարում էին յետ-
նորդներ մահապարտներէ նման, և երբ նոքա լինում էին
դեռապան աշխարհի, և հրեշտակաց և մարդկան։ Մեր յե-
տնորդներ եղան Քրիստոսի համար։ Մինչև այսօր քաղցեցին,
ծարաւեցին, մերկ մնացին, ծեծուեցին և անհանգիստ
եղան, աշխատեցին մեր յետևերով։ Բանբասուում էին մեզ
մեր օրհնում էին, հալածում էին՝ մեր սիրով համբերում
էին, հայհոյում էին՝ աղաչում էին. ինչպէս աշխարհի խայ-
տառակ-ընեան օրինակ՝ մինչև անարգանք էին կրում մեր-
վրայ այժմ (1. կոր. 4. 9—13)։

Քրիստոսի սիրոյ համար Ս. Պողոսը շատ նեղութիւններ
կրեց, մինչև անգամ կարողացաւ ասել. ես ո՞ւրշներից
(Առաքեալներից) ա՞ւելի եմ. ինչ աշխատանքով՝ ա՞ւելի, ինչ
մահով՝ շատ անգամ։ Հրեաներից հինգ անգամ խոտոնուեց
մի պակաս ծեծ կերայ։ Երեք անգամ յաղկով (գաւազանով)
ծեծուեցի. մի անգամ խարկոծ եղայ. երեք անգամ նաւակոծ
եղայ, ցերեկ և գիշեր անդնդումը նեղուած կրեցի։ Ճա-
նապարհներումը՝ շատ անգամ. գետերից նեղուած-ներ,
ասալիներից նեղուած-ներ, իմ ազգից նեղուած-ներ,
հեթանոսներից նեղուած-ներ, խաղաղ մեջ նեղուած-ներ,
անապատի մեջ նեղուած-ներ, ծովի մեջ նեղուած-ներ,

ասուած եղբայրներից նեղուած-ներ։ Զանազան և աշխատանքի
մեջ. պատերի մեջ շատ անգամ. ցրտի և մերկութեան մեջ.
և այլն (2. կոր. 11. 23—32)

Քրիստոսի սէրը թելադրեց նորանց աներկիւղ խոստո-
վանել նորա անունը Երուսաղէմում իրանց թշնամեաց
ժողովրդի առաջև, չար քահանայապետների, ծերերի և
դպիրների առաջև, որոնք ձեռ ձգեցին, բանդի մէջ դրին
նորանց և կամենում էին սպանել, բայց միայն ժողովրդից
վախենալով՝ ծեծեցին նորանց ու պատուիրեցին, որ էլ
չիսօսեն Յիսուսի անունովը։ Նոքա ժողովրդի առաջից գնա-
ցին ուրախանալով՝ որ արժանի եղան տէր Յիսուսի ա-
նուան համար անարգուելու. և ամեն օր՝ տաճարումը թէ
տների մէջ՝ չէին դադարում սովորեցնելուց ու Յիսուս
Քրիստոսին քարոզելուց (Գործ. 4 և 5)։

Քրիստոսի աշակերտների սէրը չսառեց մինչև իրանց
մահը։ Այսպէս Ս. Ստեփաննոսը մարտիրոսական մահով
մեռաւ Քրիստոսի սիրոյ համար. և երբ Քրիստոսի թշնա-
միները ատամներ էին կրճտեցնում նորա վերայ, ամենը
միաբան վազեցին դէպ'ի նա, և քաղաքից դուրս հա-
նելով՝ սկսեցին քարկոծել նորան, նա իւր հրեշտակա-
տեսիլ դէմքը դարձրեց դէպ'ի երկինք, տեսաւ Աստու-
ծոյ փառքը և Յիսուսին՝ որ Աստուծոյ աջ կողմումը
կանգնած էր, և Քրիստոսի սիրոյ համար՝ Քրիստոսի պէս
աղօթք արեց իւր թշնամիների և սպանողների համար,
տէ՛ր, այս մեղք մի՛ համարիր դոցանց համար (Գործ. 7)։

Քրիստոսի մի և նոյն սիրով լցուած էր և Յակոբոսը,
որին Հերովդէսը իւր ուսուցչի պատճառաւ՝ սպանեց սրով։
Քրիստոսի սիրոյ համար Պետրոսը յօժարութեամբ գնաց

բանդ և մարտիրոսական մահով կնքեց իւր կեանքը հռոմ-մում: Նոյն իսկ սիրովը լցուած էին և բոլոր Առաքեալ-ները, այնպէս որ՝ անտրտունջ կերպով շատ հալածանք-ներ ու չարչարանքներ կրեցին իրանց բոլոր կեանքի մէջ, և վերջապէս տէր Յիսուսի անուան համար մահ ընդու-նեցին:

Այդ հաւատը՝ որ Աստուծոյ Որդւոյ սիրոյ միջոցաւ նոքա գործով ապացուցին իրանց կեանքում և մահուան ժամին, սէրն էր նոցա համար ստացել Հայր Աստուծուց:

III

ԵՐՐՈՐԴ ՆԿԱՏՈՒՄՆ

Թէ ի՞նչպէս ենք սիրում՝ և ի՞նչպէս պիտի սիրենք մեր Տէրոջը:

Մենք ի՞նչպէս ենք արդեօք: Պատկանո՞ւմ ենք Աստուծոյ սիրելիների դասին: Կարո՞ղ ենք մենք էլ այնպէս լինիլ:—Առանց երկբայութեան կարող ենք:—Եթէ մեր հաւատը և սէրը առ Քրիստոս Առաքելոց հաւատի ու սիրոյ նման լինին, անշուշտ մենք էլ նոցա պէս Հօր սիրելիները կ'դառնանք: Եթէ Յիսուս Քրիստոսի վկայութեան համեմատ նոքա իրանց սիրովը ու հաւատով Աստուծոյ սիրելիները դարձան, ապա մե՛զ ի՞նչնէ արգելում հաւատալ ու սիրել նոցա պէս, որ Աստուած մեզ էլ սիրէ այնպէս՝ ինչպէս սիրեց նորանց:

Չ'է կարելի յոյս կապել մարդկանց վկայութեան ու հաւանութեանը, որոնք դատումեն առ հասարակ ղրսին նայելով, գովումեն մեզ, մինչև անգամ երբեմն էլ ագէտ լինելով՝ սրբեր ու երանելիներ են կոչում: Դորա-նով մենք կարող ենք Քրիստոսի ահեղ դատաստանի օրը՝ դուրս ձգելով նորա երեսից՝ վտանգի մէջ լինիլ: Ուրեմն՝ եթէ ուզենանք պահպանել մեզ կորստաբեր ինքնախա-

բութիւնից, ձեռ պիտի բերենք Քրիստոսի հաւատն ու սէրը, պիտի հետևենք Առաքելոց օրինակին,—այսինքն, պիտի հաւատանք նոցա պէս, պիտի սիրենք ու ընթանանք նոցա նման:

Ընթերցո՛ղ, դադի՛ր ինքդ քեզ, որ չդատապարտուիս. քննի՛ր քեզ.—կարո՞ղես արդեօք քրիստոնեայ կոչուիլ Յիսուս Քրիստուի և նորա Առաքելոց պատուէրները պահելուդ համեմատ: Նմանո՞ւմես դու նորանց քո սիրով ու հաւատով: Հաւատա՞ լս արդեօք, որ Յիսուս Քրիստոսը՝ եթէ յանկարծ յայտնուէր, քեզ էլ պիտի ասէր. «Հայրը ինքը սիրումէ քեզ, որովհետև դու սիրեցիր ինձ և հաւատացիր, որ ես Աստուածանից եմ եկել»: Աներկբա՞յ ես արդեօք, որ այդ վկայութիւնը կ'տայ նա քեզ այս կեանքից փոխվելուդ միջոցին, կամ թէ կենդանիներին ու մեռաներին իւր երկնային ամպերով դատել գալու ժամանակին: Հաւատա՞ ես դու արդեօք, որ քո սէրը և հաւատը ճշմարիտ են, Աստուծոյն համեմելի ու Քրիստոսով փորձուած: Եթէ Աստուծոյ հոգին վկայումէ քեզ, թէ դու Աստուծոյ զաւակ ես, հօր սիրելի որդի ես, ապա՝ այդ ցո՛յց տուր ուրիշներին այս հոգւոյ պտուղներովը (Գաղ. 5. 22). որովհետև՝ Աստուծոյ որդիքը Աստուծոյ հոգովն են վարվում (Հռոմ. 8. 14):

Քննեցէ՛ք ու փորձեցէ՛ք ձեր անձները, ո՛վ ձեզ քրիստոնեայ և Աստուծոյ սիրելիներ անուանողներ, ուրացա՞ծ չէք արդեօք ճշմարիտ քրիստոնէի զօրութիւնը՝ ունենալով միայն բարեպաշտութեան կերպարանք: Շատերը իրանց համարումեն ճշմարիտ քրիստոնեաներ և Աստուծոյ սիրելիներ, որովհետև՝ հասած են ճշմարիտ ուսման,

և կարող են շատ խօսել նորա վերայ: Բայց եթէ դորանով է սահմանափակվումէ նոցա քրիստոնէութիւնը, եթէ նոքա աւելի մի բան չ'ունին,—ապա՝ պատկանումեն նոքա այն դժբախտների կարգին, որոնք ժամանակ կ'գայ, որ՝ իզուր պիտի ասեն Յիսուս Քրիստոսին.—Տէր՛, տէ՛ր, ո՞չ ապա՞ էին քո անունովը մարգարէանի՞ պրինք, քո անունովը դեւերը հանեցի՞նք և քո անունովը շատ հրաշքներ արի՞նք: Յիսուսը Բրնդապան էլ յայտնապէս պիտի ասէ նոցա.—Ես քնաս չէմ ճանաչում յեղ, հեռա՛ գնացէ՛ք ինձանից՝ որ անօրէնութիւն էք գործում (Մատ. 7. 22 23):

Նոքա՝ միայն կարող են անուանվել Աստուծոյ սիրելիներ, որոնք հաստատումեն իրանց հաւատը Քրիստոսի զօրութեան վերայ և առաջնորդվումեն Քրիստոսի եկեղեցւոյ մէջ բնակվող Աստուծոյ Հոգւովը,—որոնք դարձել են գէպ'ի Աստուած այնպէս՝ որ նոցա վերայ յարմար է գալիս Առաքեալի այս խօսքերը.—Լուացուեցանէ, պրէուեցանէ Տէր Յիսուսի անունովը և Դեր Աստուծոյ Հոգովը (1. Կոր. 6. 11): Ես յեղ՝ որ դուռաց էի յանցանէ՝ նէրի ու դեղէրի դէջ . . . . . Աստուաց . . . . կենդանացրէց Բրնդապան հետ (Եփես. 2):

Ապա ուրեմն՝ մի՛ խարուիք, Աստուած չէ անարգուիլ. որովհետև՝ ինչ որ սերմանում է մարդը, նոյնը և պիտի հնձէ (Գաղ. 6. 7): Աստուծոյ հիմը կենում է հաստատուն, և ունի այս նիշերը. Տէրը ճանաչում է նորանց, որոնք իրանն են, և ով՝ անիրաւութիւնից հեռու մնան այն ամենը, որոնք անուանում են Տիրոջ անունը (2. Տիմ. 2. 19). այսինքն՝ իւրաքանչիւր ոք պիտի ապացուցանէ իւր բարեպաշտ կեանքով՝ որ ինքը Աստուծոյ զաւակ է:—Նմանապէս

եղէ՛ւ Աստուածոյն՝ ինչպէս պէտք է որդիներ (Եփես. 5. 1), որ լինիւ որդիք յեր երկնաւոր Հօր, Որը ծագումն է ի-ր արևը չար և բարի մարդկանց վերայ (Մատ. 5. 45):

Ո՛րքան շատ սենուին Աստուծոյ պատկերն ու Հոգին մեր կեանքի, մեր ընթացքի, մեր խօսքերի և զգացմունք ների մէջ, այնքան էլ շատ կարող ենք հաւաստի լինիլ, որ Աստուած սիրումէ մեզ և իրանն է համարում:

Զգուշացէ՛ք ձեր անձները խաբելուց, և մի՛ երևակայէք, որ դուք արդէն Աստուծոյ զաւակները ու սիրելիներն էք, եթէ միայն շատ գիտէք, շատ կարդումէք, շատ լսումէք և շատ խօսում Քրիստոսի վերայ, բայց ձեր սրտերի մէջ չ՛էք զգում նորա շնորհաց ներկայութիւնն ու ներգործութիւնը. եթէ ո՛չ՝ անձնատուր լինելով այդ անձնախաբութեանը, դուք կ՛նմանիք այն անխելք մարդուն, որ շինեց ի-ր տունը ամրելի վերայ. անձրևները եկան. գետերը վազեցին, քամիները փչեցին, բախեցին այն տունը՝ և վեր ընկաւ, և նորա կործանումը շատ մեծ էր (Մատ. 7 26, 27): Հետևեցէ՛ք Տիրոջ խորհրդին, լսեցէ՛ք նորա խօսքերը և կատարեցէ՛ք նորանց.—այն ժամանակ կ՛նմանիք դուք այն խելացի մարդոյն, որ շինեց իւր տունը քարի վերայ: Դա՞ւ էր բարեկամները էլ, ասում է Քրիստոսը, երբէ կատարէ՝ այն՝ ինչը ես յեր կ՛պատուիրեմ: Նա՝ որ էր վերայ է հաստատուած և ես նորա վերայ, շատ պտուղ կբերէ, իսկ նա՝ որ էր վերայ չէ հաստատուած, —ցիրուանդ պէս դուրս յիգուած ու ջրացած է: Սրտանով կ՛փարուրէ հայրը, երբէ դուք շատ պտուղ բերէք . . . . . : Աստենայն ցիրուանդ՝ որ էր վերայ է և պտուղ է բերում, հատքում է նորան, որ էլ ուրիշ պտուղ բերէ (Յովհ. 15):

Եւ Ս. Յովհաննէսը Աստուծոյ զաւակների համար ասումէ հետևեալը: Սիրելիներ, դուք այժմ Աստուծոյ որդիք էք, և քիչ յայտնի չէ ըստ՝ ինչ պիտի լինինք բայց գիտենք՝ որ երբէ նա յայտնուի, նորա պէս պիտի լինինք, որովհետև՝ պիտի տեսնենք նորան՝ ինչպէս որ է:—Ինչ մխիթարական խօսքեր են. և էլ ի՞նչ է աւելացնում այս նոյն Առաքեալը.—Եւ ամեն՝ ով որ այս յոյսը ունի նորա վերայ, ինքը երան մաքրում է, ինչպէս որ նա մաքուր է: Ամեն՝ ով որ մեղք է գործում, նա անօրենութիւն է անում . . . . . : Ամեն՝ ով որ նորա մէջն է հաստատուած, մեղք չէ գործում. և ամեն՝ ով որ մեղք է գործում, նորան տեսած ու ճանաչած չէ: Մանուկներ, ո՛չ ոք չեղ չէ՛ խաբէ, նա՝ որ արդարութիւն է գործում, արդար է ինչպէս նա արդար է: Եւ նա՝ որ մեղք է գործում, սատանայինէ (1. Յովհ. 3):

Մի և նոյնը ասումեն և բոլոր Առաքեալները: Նոքա ապացուցանումեն, որ մենք միայն գիտութիւնով ու բարեպաշտական արտաքին գործերով չենք կարող հաճոյ լինիլ Աստուծոյն. և ասումեն թէ՝ նա՝ որ ցանկանումէ հետևել Քրիստոսին, մասնակցութիւն ունենալ նորա շնորհաց ու ծառայութեան մէջ, փրկուիլ նորա ձեռքով՝ և արժանանալ երկնաւոր Հօր սիրուն, բոլորովին պիտի փոխուի սրտով՝ և սուրբ ու բարեպաշտական կեանքով ապրի Քրիստոսում:

Ո՞ւրեմ՝ սիրելիներ, գրումէ Պողոս սրբազան Առաքեալը, որովհետև դեռ այս խոստումները ունենք (այսինքն թէ՝ Աստուած կ՛բնակուի մեր մէջ և մենք կշարժուինք նորանով. նա մեր Աստուածը կ՛լինի և մենք նորա ժողովուրդը), հատ-

չենք մեր անձինքը մարմնոյ և հոգւոյ ամեն կեղտից պղծութենից՝ և սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախով (2. Կոր. 7. 1)։ Սենք աղաչում ենք, որ Աստուծոյ շնորհէը ՝ներս ընդունած չլինիք (Կոր. 6. 1)։

Այս և սոցա նման ուրիշ յորդորանքներից ու խրատներից, որ տալիս էին Առաքեալները՝ մենք կարող ենք հասկանալ թէ՝ ինչպէս պիտի լինին Աստուծոյ սիրելիները։ Եւ ո՛վ չէր փափագիլ Աստուծոյ զաւակը լինելուն։—Բայց ի՞նչ օգուտ կ՚բերէ մեր արտաքին բարեպաշտութիւնը, եթէ մեր սիրտը Աստուծոյ սիրովը ազդուած չլինի։ Սիրենք Յիսուս Քրիստոսին, որովհետև առաջնա սիրեց մեզ։ Սիրենք նորան այնպէս՝ ինչպէս ինքը սիրեց մեզ։ Նա մատնեց իւր անձը մեզ համար, տուեց իւր կեանքը մեր փոխանակ։ Եթէ մենք դեռ ևս պատրաստ չենք նորան կամ նորա համար միայնզամայն տալու մեր անձը, ապա մենք չենք սիրում նորան այնպէս՝ ինչպէս նա սիրեց մեզ, և չենք հաւատում այնպէս, ինչպէս պէտք է հաւատալ, որ նա սիրեց մեզ և մատնեց իւր անձը մեզ համար։ Ով ակար է նորա սիրոյ մէջ, նա ակար է և նորան հաւատալում։ Ով հաստատ և կենդանի հաւատումէ, թէ խաչի վերայ խաչուածը Աստուծոյ որդին է, և թէ նա իւր կեանքը տուեց մեր փոխանակ, նա ճշմարտապէս սիրումէ Փրկչին և պատրաստ է նորա համար զոհել ամեն բան. նա զգումէ, որ իւր ամեն գործերը, զոհերը ու չարչարանքը՝ համեմատելով Քրիստոսի գործերի, զոհի և չարչարանաց հետ, ո՛չինչ են։

Արդ՝ սիրելի ընթերցող, կարո՞ղես արդեօք Յիսուս Քրիստոսի այս հարցման, որը նա ուղղումէ և դէպ՚ի քեզ.

Սէրո՞՝ է ինձ, պատասխանել Պետրոս Առաքեալի հետ։ Այո՛, Տէր, դու գիտես, որ է սէրս է քեզ։ Եթէ մենք մեր բոլոր կեանքով հաստատենք այդ ասածի ճշմարտութիւնը Պետրոսի, բոլոր Առաքեալների և առաջին քրիստոնեաների նման, ապա Յիսուս Քրիստոսը, ճշմարիտը և հաւատարիմը կ՚ասէ և մեզ. Ձե՛՝ ասում՝ յեղ, ինչ է պիտի ապրեմ՝ յեղ համար հոգը, ինչ՝ որ՝ հայրը ինէ՝ սէրս՝ է յեղ, որովհետև՝ դու՝ սիրեցիր ինձ և հաւատացիր, որ է Աստուածանից եկայ,

Թէ ո՛րքան կարևոր է մեզ համար Յիսուս Քրիստոսի այդ վկայութիւնը, և թէ ո՛րքան շատ պիտի աշխատենք ստանալու դորան, մենք այդ ամենը կ՚իմանանք այն ժամանակ, երբ Որդին մարդոյ կ՚գայ երկնքի ամպերի վերայ զօրութիւնով և մեծ փառքով, և կ՚բաժանէ իրարուց բոլոր ազգերին՝ ինչպէս մի հովիւ, որ կ՚բաժանէ ոչխարներին այծերից.—կ՚իմանանք այն ժամանակ, երբ նա բոլոր հրեշտակների և մարդկանց առաջև, Աստուծոյ ամեն արարածների, երկնքի ու երկրի առաջև կ՚յայտնէ մեծաձայն և հանդիսաւոր եղանակաւ թէ՝ միայն երկու տեսակ մարդիք կան,—բարի և չար, Աստուծոյ սիրելիներ և Աստուածանից մերժուածներ, հոգ օրհնածներք և անիծածներք։

Այն ժամանակ կ՚յայտնուի թէ՝ որպիսի՛ երևելի ու մեծամեծ հետևանքներ են ունեցել Յիսուս Քրիստոսի վերայ եղած սէրն ու հաւատը, որ նա եկաւ Աստուածանից, ընդունեց մեզ համար մարդոյ կերպարանք, մեռաւ, յարութիւն առաւ և նստած է Աստուծոյ աջ կողմումը.—այն ժամանակ կ՚յայտնուի, որ այդ սիրով ու հա-

ւատով ստացվումեն Աստուծոյ սէրն ու ողորմութիւնը, որովհետև՝ Յիսուս Քրիստոսը միայն այդպիսի հաւատացեալների համար է վկայում թէ՝ նոքա հոր սիրելիներն են.—միայն նոցա կ'ասէ.— Եկէ՛ք, ով հոր օրհնածներդ, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստած արքայութիւնը, քանզի՝ որ՝ քաղցեցի, դո՛ք ինձ ուտել տուէք, ծարաւեցի, դո՛ք ինձ ջրացրէք, և այլն: Որովհետև այս քո՛ղերը եղբայրներիս Ղէկեն արէք, ինձ արէք (Մատ. 25. 34, 40): Բայց նոցա՝ որոնք երկրի վերայ չ'սիրեցին Իրան, և չ'հաւատացին իւր անուան, կամ թէ միայն կեղծաւորութիւն արին և Իրանց հաւատը չ'ապացուցին գործունեայ սիրով, Տէրը կ'ասէ. Գնացէ՛ք ինձանից, անէծածներդ, յաւիտենական կրակի մէջ, որ պատրաստած է սատանայի և նորա հրեշտակաց համար. քանզի՝ որ՝ քաղցեցի, դո՛ք ինձ ուտել տուէք՝ չ'տուէք, ծարաւեցի, դո՛ք ինձ չ'ջրացրէք, և այլն: Որովհետև այս քո՛ղերիս Ղէկեն չ'արէք, ինձ էլ չ'արէք (Մատ. 25. 41 45):— Եւ այդ ձայնը թէ՝ Եկէ՛ք, կամ Գնացէ՛ք ինձանից, կ'վճռէ բոլոր մարդկանց վիճակը յաւիտենական և անփոփոխելի վճռով: Որին Յիսուս Քրիստոսը կ'անուանէ այն ժամանակ հոր սիրելի, և նորանից օրհնուած, նա այնպէս և կ'լինի յաւիտեանս յաւիտանից, և որին կ'անուանէ անիծեալ՝ և կ'հեռացնէ Իրանից, նա էլ այնպէս կ'լինի յաւիտեանս յաւիտանից, և ո՛չ ոք երբէք չ'էլ կարող օգնել նորան: Ո՛վ երկրային կեանքում չ'էլ կամեցել Աստուծոյ սիրելին լինել, և մարդկանց սէրն ու բարեհաճութիւնը առաւել է դասել Աստուծոյ սիրուց, նա անդառնալի կերպով պիտի մերժուի Յիսուս Քրիստոսից՝ և առ յաւիտեան ինքն Իրան վերայ

փորձառու եղած՝ պիտի տեսնէ թէ՝ ինչ կ'նշանակէ արհամարհել Աստուծոյն և նորա սէրը,—Յիսուս Քրիստոսին և նորա շնորհքը: Անարգողը յաւիտեանս յաւիտանից պիտի անարգուի: Նա՝ որ չ'էլ հնազանդել Որդոյն, չ'էլ սիրել նորան, կեանք չ'պիտի տեսնէ, այլ Աստուծոյ բարկութիւնը նորա վերայ կ'մնայ (Յովհ. 3. 36):

Ուրեմն՝ եկէ՛ք միշտ յիշենք այն մեծ վերջին օրը, երբ իւրաքանչիւր մարդ պիտի իմանայ թէ՝ ինքը ինչի՛ է արժանի, Աստուծոյ սիրո՞ն, թէ բարկութե՞ան: Թողէ՛ք հաւատանք նորան, որը Աստուածանից եկաւ մեզ մօտ, որ մեզ տանէ Աստուծոյ մօտ:—Սիրե՛նք նորան, որովհետև՝ առաջ նա սիրեց մեզ: Յո՛յց տանք նորան մեր սէրը՝ ո՛չ թէ միայն խօսքով, այլ գործով և ճշմարտութեամբ: Այն ժամանակ Տէրը մեզ էլ կ'արժանացնէ իւր սիրոյն և կ'ասէ մեզ՝ ինչպէս իւր սիրելիներին. Եկէ՛ք, ով հոր օրհնածներդ, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստած թագաւորութիւնը:

3n

898

0027687

898